ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան 29.11.2024թ.

1. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2024 թվականի նոյեմբերի 29-ի հերթական նիստին.

ա) մասնակցում էին՝

Գ.Պապոյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար, Խորհրդի նախագահ

Լ.Նանուշյան - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Տ.Հակոբյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ, Խորհրդի անդամ

Կ. Չիլինգարյան - «Սպառողների խորհրդատվության կենտրոն» նախագահ, Խորհրդի անդամ

Է. Էլբակյան - ՀԱՊՀ մինչբուհական կրթության գծով պրոռեկտոր , Խորհրդի անդամ

Կ.Սահակյան - ԵՊՀ դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, Խորհրդի անդամ

Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ–ի աջակցության ծրագրերի ղեկավար, Խորհրդի անդամ

Ժ.Խառատյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի համակարգման և մեթոդաբանության վարչության պետ

Ա. Կոտոյան – Տեսչական մարմնի ղեկավար

Ա. Մկրտչյան – Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

Գ. Սահակյան - Խորհրդի քարտուղար

Ա. Սարգսյան - Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ

Ա.Տերտերյան – Տեսչական մարմնի ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչության պետ

բ) բացակայում էր՝

Ն. Հովակիմյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Հերթական նիստի օրակարգային հարցեր.

2. Օրակարգում ընդգրկված հարցերն էին՝

1. Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան
2. Հաստատել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2025թ. ստուգումների տարեկան ծրագիրը:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան
3. Հաստատել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2025թ. գործունեության ծրագիրը:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան
4. Հաստատել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2025թ. գործունեության ծրագիրը:
   Զեկուցող՝ Ա.Սարգսյան

Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 29-ի վեցերորդ հերթական նիստը սկսվեց օրակարգի հաստատմամբ: Տեսչական մարմնի ղեկավարն առաջարկեց օրակարգի 2–րդ և 3–րդ հարցերի քննարկումն իրականացնել համատեղ, քանի որ բովանդակային փոխկապակցված են:

Օրակարգի առաջին հարց՝ նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում:

Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանն առաջարկեց նախորդ նիստին տրված հանձնարարականների քննարկումը տեղափոխել Տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ նիստին, քանի որ քննարկումը կապված է ՀՀ էկոնոմիկայի նախարարի

տեղակալ, Տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամ Ն.Հովակիմյանի հետ, ով նիստին ներկա չէ:

Օրակարգի երկրորդ և երրորդ հարցեր՝ հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2025թ. ստուգումների տարեկան ծրագիրը և Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2025թ. գործունեության ծրագիրը:

Օրակարգի երկրորդ և երրորդ հարցերը ներկայացրեց Տեսչական մարմնի ղեկավարը: Արմեն Կոտոյյանը Տեսչական մարմնի Խորհրդի անդամներին ներկայացրեց Տեսչական մարմնի 2025թ. ստուգումների տարեկան ծրագիրը և գործունեության ծրագիրը: Զեկույցից հետո ծավալվեց քննարկում, որից հետո Տեսչական մարմնի կառավարման խորհուրդը որոշեց Տեսչական մարմնի 2025 թվականի գործունեության ծրագրի միջոցառումների ծրագրում ավելացնել ևս մեկ միջոցառում, ըստ որի՝ Տեսչական մարմինն առաջին եռամսյակի ընթացքում կդիմի ՀՀ վարչապետին թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի ոլորտում 2025թ. ընթացքում ոլորտային ստուգումներ իրականացնելու խնդրանքով:

Առաջարկվեց Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակին վերանայել ռիսկերի գնահատման ընթացակարգը կարգավորող իրավական դաշտը, ինչի արդյունքում հնարավոր կլինի ստուգումների ծրագրում ընդգրկել ավելի շատ միջին և ցածր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներ: Ռիսկերի գնահատման նորմատիվ իրավական ակտերի փոփոխման դեպքում, ըստ անհրաժեշտության, փոփոխություններ կամ լրացումներ կատարել 2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրում:

Որոշվեց միաձայն՝ հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2025թ. ստուգումների տարեկան ծրագիրը և Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2025թ. գործունեության ծրագիրը՝ այդ ծրագրի միջոցառումների ծրագրում համապատասխան միջոցառումն ընդգրկելու պարագայում:

Օրակարգի չորրորդ հարց՝ հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2025թ. գործունեության ծրագիրը:

Օրակարգի չորրորդ հարցը ներկայացրեց Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ Արարատ Սարգսյանը: Զեկուցողը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2025թ. գործունեության ծրագիրը:

Որոշվեց միաձայն՝ հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2025թ. գործունեության ծրագիրը:

Խորհրդի նախագահ՝

_____ Գ.Պապոյան
ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝

_____ Գ.Սահակյան
ստորագրություն